

I. ՀԱԶՅԱՆ

ԳԱԲՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՂՈՍ ԱՅՎԱԶՅԱՆԸ Ի. Ա. ԿՈՒՀՈՎԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Ս. Էջմիածնի վաստակաշատ միաբանության անդամների շարքում իր առանձին ու հաստատ տեղն ունի Գարբիել արքեպիսկոպոս Այվազյանը։ Ծնվել է 1812 թվականի մայիսի 12-ին Դրիմի Թեոդոսիա քաղաքում։ Հինգ տարեկանից հաճախում է Թեոդոսիայի գավառական դպրոցը։ Ցոյ տարի ապստեղ սովորելուց հետո աշակերտում է հ. Մինաս Բժշկյանին, իսկ 1826 թվականին մենաում է Վենետիկ, ո. Ղազար՝ Միսիքարյան միաբանության դպրոցում իր ուսումը կատարելագործելու նպատակով։ Այստեղ ևա աշակերտում է վաստակաշատ հայագետներ, հ. Մկրտիչ Ավգերյանին, հ. Մանուկ Զախարյանին և հ. Միքայել Չամչյանին։ Բնածին ընդունակություններին ու ստացած կանոնավոր կրթությունը շուտով տալիս են դրանք արդյունք։ Գ. Այվազյանը մասնակցում է «Հայկազյան» և «Սոնեռն» բառարանների ստեղծմանը, ինչպես նաև, բացառության կարգով, դեռ նախքան քահանայական աստիճան ստանալը, Եշանակվում է ուսումնարանի՝ սկզբում ելքրոպական և արևելյան լեզուների, ապա նաև՝ փիլիսոփայության և աստվածաբանության ուսուցիչ։ Նա միաժամանակ վարում է միաբանության ընդհանուր քարտուղարի դժվարին պաշտոնը։ Տակավին երիտասարդ Գարբիելը 1838 թվականին գրում է «Համառու պատմութիւն Ռուսաց» աշխատությունը, որով իր ընթերցողներին ծանոթացնում է Ռուսաստանի պատմու-


թյան Ռյուրիկ իշխանց մինչև Նիկոլայ 1-ի թագավորության հինգերորդ տարին ընկած ժամանակաշրջանին։ Նրա հաջորդ՝ «Պատմութիւն Օսմանեան պետութեան» գործը ստվարածավալ աշխատություն է, որը զգալի հետաքրքրություն է ներկայացնում, մասնավոր ազգագրական առումով։

Որքան էլ բազմազբաղ, այսուամենաբնիլ նա հետամուտ է լինում ամսագիր հրատարակելու իր վաղեամ ձգումանը, և ահա 1843 թվականին նրա շանքերով հիմնվում է «Բազմալեպ»-ը։ Վեց տարի շարունակ հնմուրեն խմբագրելուց հետո, նա այդ գործը հանձնում է իր լավագույն աշակերտ հ. Ղունդ Ալիշանին, իսկ ինքն անցնում է Փարիզ՝ դեկավարելու համար տեղի Մուրյան վարժարանը։

Նշանակալից է եղել անվանի գիտնական ու բանաստեղծ հ. Ղ. Ալիշանի հասունացման գործում Գարբիել վարդապետ Այվազյանի դերը։ Նա Ալիշանի «...երիտասարդութեան ժամանակակից ոգին էր, իր տարօրինակ խանդական գործունեութեամբ ամբողջ երիտասարդութեանը դեպ ի գործ և դւե ի ամսոնց աշխատանք կը մոլէ...»¹։

1848 թ. Փարիզի Ունիտ ակադեմիան Այվազյանին շնորհում է դոկտորի կոչում։ Մուրյան վարժարանում ծագած «կաթոլիկ—ոչ կաթոլիկ» վեճերի հետևանքով Գ.

¹ Հ. Ս. Երևան, Կենսագրութիւն հ. Ալիշանի, ո. Ղազար, 1902, էջ 104:



Տ. ԳԱԲՐԻԵԼ, ԱՐՁԵՊԻՄԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՅԱՆ

վարդապետ Այլվազյանը թողնում է դպրոցը, միաժամանակ հրաժարվելով նաև Միխիթարյան միաբանությունից²: Իր երեք ընկերների հետ Փարիզում նա հիմնում է Հայկացյան վարժարանը, որին զուգահեռ հրատարակում է մի նոր պարբերական՝ «Մասեաց աղաւին»-ն: Այս շաբաթաթերթը լուս էր ընծայվում 1855 թ. սկսած՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներով: Ֆրանսիացի ընթերցողին մատուցվում էին հիմնականուն հայ ժողովոյի մշակութային հարուստ ամենայլը ներկայացնող հյութերը, հայերեն տպագրվում էին պատմական, գրական, ազգագրական, ինչպես նաև քաղաքականությանը, արհեստներին վերաբերող տեկնեկություններ:

Գարբիել վարդապետ Այլվազյանը, մըղված իր նոր համոզություններից և ընդառաջելով իր եղբոր՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այլվազյովսկու թախաճանքին³, դիմում է ներսեւ Եկաթողիկոս Աշտարակեցու՝ խնդրելով ընդունել իրեն Մայր եկեղեցու գիրկը: Ս. Էջմիածնի միաբանությունն ընդունում է նրան իր շարքերում: 1857-ին Գարբիել վարդապետը վերադառնում է Ղրիմ, հշանակվում Բեսարաբիայի և նոր Խախիչևանի թեմի առաջնորդ: Հիմնում է Խախիչյան վարժարանը, տպարանը և շարունակում հրատարակել «Մասեաց աղաւին»-ն, այս անգամ արդեմ հայերեն ու ռուսերեն:

1867 թ. Գևորգ Դ կաթողիկոսը նրան հշանակում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ, ձեռնադրում եպիսկոպոս և հշանակում և. Էջմիածնի Սինոդի անդամ: 1875 թ. նույն կաթողիկոսի կոնդակի համաձայն հշանակվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ՝ նկատի ունենալով այն, որ նա «...դաստիարակու-

² Այս մասին տես. Գար. Եղիշիկ. Այլվազյան, Պատմություն Վերադարձի երից վարդապետաց ի ծոց Հայաստանաց ու եկեղեցւոյ, վերադարձ և չորրորդին տ. Խորենաց Գալֆայեան քերթող վարդապետի, Փարիզ, 1858:

³ Գարբիելի կրտսեր եղացը՝ Հովհաննես Այլվազյովին, շատ բան է արել տևանելու համար Ղրիմ առանց կարողիկների: Այս մասին նա հաճախ ակնարկել է իրեն ացցելող ու հյուրընկալվող բարձրաստիճան անձանց շրջանում, բայց չունեցող շշափելի որթ: Արդյունք, 1846 թվականին մի համական Մատենադարան, արթիվ, Կաթողիկոսական դիման, թղթ. 121, վալ. 15) դիմում է Ներսաւ Ե կաթողիկոսին՝ շաբարձելով իր, ինչպես նաև շատ-շատերի խղճը՝ հնացնել Միխիթարյաններին Տավրիկան համանդից, որ նրանք պատակատում են առաջացնում հայոց մեջ:

թյան կենսական խնդրով և արդյանց մեջ ևս ունեցած ողջամիտ՝ բազմափորձ հմտությունն և հաջողականությունն մեծ գրավական պիտի լինի ճեմարանի ապագայի համար, և կիուամբ որ կարևոր աշակցությամբ և օժանդակությամբք նպատակույալ՝ Աստուծով կհաջողի իր մեծ անվան և բազմափորձ հմտությանցն համաձայն մեծ և փառավոր արդյամբք զարդարել և ճոխացնել զեմարան Մայր Աթոռույս, և Վեհ. Հայրապետի՝ ինչպես նաև Հայաստանյաց եկեղեցւու և Ազգի արդար և մեծամուլ ակնալարությունը պասկել, միանգամացն առվել և շրեացնել և պայծառացնել իր մեծահամբարձ և արժանավոր անունը և փառքը»⁴:

Նոյն թվականին նրան հանձնվում է Վրաստանի և Խմերեթի թեմակալությունը՝ արքեպիսկոպոսական պատվի հետ միաժամանակ:

Իր կյանքի վերջին տարիներին նա առանձնակի ավանդ է ներդրել Ներսիսյան դպրոցի, ինչպես նաև իր առաջնորդական տարիներին հիմնաված Մարիամյան դպրոցի գործունեության մեջ:

1880 թվականի ապրիլի 28-ին իր մահկանացուն է կնքում Գարբիել արքեպիսկոպոս Այլվազյան՝ արթելով 68 տարվա բովանդակալից կյանք:

* * *

Գարբիել արքեպիսկոպոս Այլվազյանը թողել է հրապարակախոսական, մատենագրական, կրոնա-եկեղեցական շորչ երեսուն աշխատություններ, որոնցից հիշենք հետևյալները.

«Համառու պատմութիւն Ռուսաց» (Վենտիկի, 1836), «Խասագիրք մեկնութեան խորհրդոց և արարողութեանց սրբոյ պատարագին» (Թեղողսիա, 1870), «Խանգարմունք հայերէն լեզուի ի հնումն և ի նորումն» (Թեղողսիա, 1869), «Հազար ու մի առակաւոր բանք» (Կ. Պոլիս, 1875), «Յանու և կամ յաղագս ամսխալութեան պապին» (Ա. Էջմիածնի, 1871), «Ողղագրութիւն լեզուի Հայոց» (Թեղողսիա, 1869), «Վարք Քրիստոսի» (Փարիզ, 1854), «Տրովի խորհրդածութիւնը» (Փարիզ, 1854), «Քրիստոնէական վարդապետութիւն կամ վարդապետարան» (Փարիզ, 1855), «Թրէնք վայելու կենցաղավարութեան» (Փարիզ, 1854), «Հոռվմէական եկեղեցին ոչ ևս է կաթողիկէ եկեղեցի, Միջոց բահանապի Փարիզեցոյք» (թարգմ. Վաղարշապատ, 1878):

⁴ «Արարատ», Էջմիածնի, 1875, էջ 230:

Այժմ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանին, որպես հ. Ա. Կոփլովի առակների հմտութարգմանից:

* * *

19-րդ դարի 30-ական թվականներից սկսած հայ գրական գործիների շրջանում երևան է գալիս առանձնակի հետաքրքրություն ուսու առակագիրների, հատկապես Կոփլովի նկատմամբ: Ռուսական առակների թարգմանությանը ձեռնամուխ են ինչում Հարություն Վարդապետ Ալամբարյանը, Խաչատոր Սրբվանը, Հարություն Քյորչյանը և որիշներ:

Սուսակագրությանն իր էջերում որոշակի տեղ է հատկացնում ժամանակի մամուլը: Իր հրատարակման առաջին խոկ տարբանից «Բազմավեպ»-ում Գաբրիել վարդապետ Այվազյան սկսում է տապագրել ինչպես հայ ժողովրդական, այնպես էլ առանձին հեղինակների առակներ:

Գիտակցելով առայի դերն ու հշանակությունը ժողովրդի մշակութային կյանքում, տիրապետելով բազմաթիվ լեզուների և ունենալով ստեղծագործելով ակնհայտ ձիրը, 40-ական թվականներից սկսած Գաբրիել վարդապետ Այվազյանը թարգմանում է Կոփլովի, ինչպես նաև Եզովկոսի, Բաբրիոսի ու Լաֆոնտենի առակները, որոնք առաջին անգամ լոյս են տեսնում «Բազմավեպ»-ի էջերում: Թարգմանիչը միաժամանակ համապատասխան հոդվածով ներկայացնում է առայի մասին ունեցած իր տեսակնետները:

Սնդրադառնալով Կոփլովի առակների Այվազյանի կատարած թարգմանություններին, և են ժամանակին գրել է: «Զի կարելի մոռանալ ուսու առակախոս Կոփլովի առակների այն թարգմանությունը, որ կատարել է Գաբրիել վարդապետ Այվազյանը: Որպիսի չքնան պարզություն, որքան նըրքություն՝ հեգնություն, ծաղը արտահայտելու համար: Այդ գործը կարելի է համարել մեր աշխարհաբար բանաստեղծական գրականության պարձանքներից մեջը»⁵:

Գաբրիել վարդապետ Այվազյան-մտա-

⁵ Մեր հոդվածի վերջում կարևոր համարեցինք մի առանձին աշյուսակով ներկայացնել 19-րդ դարում Կոփլովին թարգմանած հայ հեղինակների ցանկը՝ նշելով նրանց թարգմանած առակների բանակը, լեզուն, հրատարակության տարեթիւնը ու վայրը:

⁶ Առաջ Ռուսական գրականություն, Վեճետիկ, 1904, էջ 51—52:

վորականի մասին բարձր է արտահայտվել նաև Աշուն Հովհաննելիսանը. «Այլազուլսկու գրական ունակությունների մասին վկայում են Կոփլովի առակների թարգմանությունները, այն երա հայտնի օսմանյան պատմությունը: Նալբանդյանը դատավ է Երան «գրական վարդապետների» շարքին, արժեք տալիս երա պատմաբանական գրվածքներին և երա ընտիր հայախոսությանը: Այլազուլսկու այս ամենին երա քարոզչական ձիրքը և երա պատկերավոր լեզուն...»⁷:

Ազգբնական շրջանում առակները գրաբարով թարգմանելու ընդհանուր երևույթ է եղել, ինչպես երևում է մեր կազմած տախտակից: Այդպես են վարվել բոլորը, այն տարբերությամբ միայն, որ հետազգում ունակը ընդհանրապես դադարել են թարգմանելուց, ունակը անհրաժեշտ են համարել գրաբարը փոխարինել աշխարհաբարով:

Այդպես է վարվել նաև գրաբարի մասին մեծ համարում ունեցող Գաբրիել վարդապետ Այվազյանը, որը, Կոփլովից ընդհանելը հինգ առակ գրաբար թարգմանելուց հետո, անցնում է աշխարհաբար թարգմանությանը: Ավելին, նա հետազգում քննադրություն է սկզբնական շրջանում իր և իրենց առաջ ուրիշների կողմից գրաբար կատարված մի քանի թարգմանությունները: Այս կապակցությամբ գրել է. «Եվ որովհետու առակին մեծ կատարելությունը պարզ և ընտանի ունով գրված ըլլալի է, առակ գրող հեղինակներուն մեջ անոնք միայն երևելի և անվանի եղեր են ամեն ազգաց մեջ, որոնք որ ուրիշներն ավելի պարզ ու բնական ոճ մը ունեցեր են: Ասով կիմացվի, որ հին լեզուներով առակ գրելն ու միանգամայն աս պարզությունը և բնականությունը պահելը կրկին դժվարություն ունի, ուստի մեր լեզուին մեջ ալ գրաբար գրված առակները չեն կրնար իրենց վախճանին ինչպես որ պետք է հասնի, որովհետու գրաբարը վեմ ծանրություն մը ունի, որ շատ դժվարությամբ կհարմարի ընտանի բացատրությանց: Աշխարհաբարը պահելի հարմար կերևա առ ենակ թեթև գրվածքներու...»⁸:

1865 թվականին Այվազյանը հրատարակության է ներկայացնում իր հատընտիր

⁷ Հովհաննելիսան Ա., Նալբանդյանը և երա ժամանակը, Երևան, 1955, էջ 261:

⁸ Գրաբարով թարգմանվել են շուրջ վեց տասնակ առակներ. Հակոբ Տեր-Զաքարյանի, Համագալապանի, Հարություն Քյորչյանի և Այվազյանի կողմից:

⁹ «Բազմավեպ», Վեճետիկ, 1846, էջ 54:

թարգմանությունների անդրանիկ գրքովկը՝ «Առակը Քոիլովի»: Այն կազմված էր հիմնականում Ռուսաստանի հայկական դրադրոցներում սովորող մանուկների համար: Գրքովկում տեղ էին գտել նաև Կոիլովի այն բոլոր առակները, որոնց թարգմանությունները նախապես տպագրվել էին «Բազմավիճակ» և «Մասեաց աղաւնի» պարբերականներում: Այն ընդգրկում է 91 առակ: Գրքովկն արագորեն սպասվեց: Դա խորապես ոգևորեց Արվազյանին. նա հինգ տարվա ընթացքում Կոիլովից թարգմանեց բազմաթիվ առակներ՝ ստեղծելով 197 առակից կազմված մի նոր ժողովածու, որպեսզի «ազգային արդի մատենագրության մեջ ավելնա Քոիլովի պես ընտիր հեղինակի մը առակներուն մեկ ամբողջ թարգմանությունը»¹⁰:

Թարգմանիչն իր ձեռքի տակ իրու քնարի ունեցել է դեռևս Կոիլովի կենդանության օրոք, 1840 թ., հրատարակված Վերջին առակագիրը: 1870 թ. տպագրված «Առակը Քոիլովի» ժողովածուն կազմելիս Գարբիել Եախակոպոս Արվազյանը պահպանել է Կոիլովի. հրատարակության 9 գրքերի դասավորությունը: Այն ունի սեղմ առաջարան, ինչպես նաև «Վարք Յովհաննու Քոիլովի» բնութագիր-կենսագրականը, որը գրել էր Կոիլովին ժամանակակից ու մտերիմ Պ. Ս. Պիլստնյովը: Այդ «Վարք»-ով ընթերցողը հնարավորություն էր սուսում ծանոթանալու ոչ միայն Կոիլովի առակների ստեղծագործական մեթոդներին, այլև նրա կյանքին ու գրական գործունեությանը: Թարգմանիչը ժողովածուին կցել էր նաև արժեքավոր ծանոթագրություններ:

Անդրադատնալով Արվազյանի թարգմանչական սկզբունքներին, հարկ ենք համարում նշել, որ Կոիլովյան առակները նա թարգմանել է՝ ելեւով զուտ գրական ստեղծագործական իր հետաքրքրություններից: Այս կամ այն առակը որևէ առիթով նաև տպագրել է նաև մամոլում ուղղելով այն որոշակի հշանակետին: Օրինակ. 1856 թ. «Մասեաց աղաւնի» ամսագրում տպագրված «Գայլն ու գաոր» առակին նախորդում է մի հոդված, որ խոսվում է Մոլդավիայում հայկական գաղութի ստեղծման, ինչպես նաև նրան տրված շոշափելի արտոնությունների մասին. «Հայերը, — գրում է Արվազյանը, — ամեն անգամ որ Մոլդավիան եկեր են, հետերնեն բերած են իրենց հարբառությունն ու ճարտարությունը և գործնական կերպով հաստակաց օգտակար բաներուն մեջ շատ օգնություն ըրած

են...»¹¹: Նրանց տրված բազմաթիվ արտոնությունների շնորհիվ որոշ հայ իշխաններ համար նեն հովհանք մոլդավական իշխանական աթոռին հատկապնդություն ունենալու պատվին: Ապա հորվածագիրը միաժամանակ նշում է այն անարդար վերաբերմունքի մասին, որին հետագա դարերի ընթացքում արժանացել են հայերը: Հորվածում այդ վիճակից դորս գալու ելքը մատնացուց չի արված: Սակայն դրանց անմիջապես հետո տպագրված առակն ասես մի բարոյախտական բացատրական է, որն ընթերցողի կողմից նույնի առնչվելու է հորվածի բովանդակությանը:

«Գայլն ու գաոր» առակը ամենից սիրվածներից է: Այն հաճախ թարգմանվել է նաև գրական որիշ գործիչների կողմից: Այդ առակի հիմնական ֆարուխան, ինչպես նաև առակի ստեղծման մոտիվները շատ հին են և ըստ ավանդության գալիս են Եզրվածություն (Յ-րդ դար մ. թ. ա.):

Կոիլովի առակներում հաճախ օգտագործվող ժողովրդական այս կամ այն արտահայտությունը ճիշտ վերարտադրելու համար ամենից առաջ ժամանակից պահանջվում էր լավատեղյակ լինել ժողովրդական բառ ու բանին: Գարբիել վարդապետ Արվազյանի աշխատություններից երկուսը («Հայոք ու մի առակավիր բանք», Կ. Պոլիս, 1874 թ., և «Խորիմու հայոց լեզվով շարադրված առակներ», Ռուսով Դ/Ա., 1875) բացահայտում են նրա նաև բանահավաք լինելը: Ռուսական արտահայտության համարժեքը գտնելու համար նա ստվարաբ դիմել է ժողովրդի լեզվահաճությունը, երբեմն միայն՝ իր երևակայությանը: Այսպես, օրինակ, «Օբեզյանի»¹² առակի «յոկրածոյ գլածելա» արտահայտությունն Արվազյանի թարգմանությունում դարձել է «կը ծրկըլտար» աչքը տրնկած կը նայեր»: Ծկլտալ, ծկլալ ժողովրդական ծագում ունի, որ նշանակում է սաստիկ հետաքրքրությամբ նայել, լավ տեսնելու համար ծակուծուկ տեղերից նայել¹³, ինչպես նաև «գաղտուկ տեղեւ մը նայիլ՝ ինքը անտեսելի մնալով»¹⁴, և այլն:

¹¹ «Հայոց ազգին ընկերական վիճակը ի Մոլդավիա», «Մասեաց աղաւնի», 1856, էջ 53: Հորվածը տպված է եղել Կոստանդնուպոլիսի «Փրևս ո՛Շոյան» ամսաթուղթի Ֆրանկոնի լրագրում, որտեղից և թարգմանված է Ս. Գրանիստյանցի կողմից:

¹² И. А. Крылов, Басни, стр. 24.

¹³ «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, էջ 312:

¹⁴ Հմիմիան ազգագրական ժողովածու, նատ. թ, Թիֆլիս, 1913, էջ 519:

¹⁰ «Առակը Քոիլովի», Կ. Պոլիս, 1870, էջ 2:

18—19-րդ դդ. թարգմանիչները, իրենց ընթերցողին հյուրն ավելի մատշելի դարձնելու նպատակով, հետևողականորեն թարգմանում էին նաև անձնանունները, երբեմն, եթե դա հնարավոր էր, նույնիսկ տեղանունները: Այս երևույթն իր արձագանքը գտավ նաև Ալվազյանի թարգմանություններից մի քանիսում:

Լավագույն թարգմանության օրինակ կարող է ծառայել «Դեմյանօվա յխա» առակը: Ալվազյանի թարգմանությունում հայացված է հնարավոր ամեն ինչ: Գործող անձներից, օրինակ, Դեմյան-ը դարձել է՝ Թաթուլ, Փոք-ը Խնչը: Տաշտեսակը, որ է յխա, թարգմանված է «գալանց»՝ այդ կապակցությամբ տպով հետևյալ բացատրությունը: «Բնագրին մեջ ուսա է, այսինքն՝ ձկնաբան կամ ձկնապոր, մեր գալաճոշ դրինք իրեն շատ հայաստանցվոց ծանոթ ապոր, որ չըր թանով, մսով, խրուտով ու սխառորվ կեփիվ»¹⁵: Հայացված է նույնիսկ հյուրափրության ձկը՝ հյուրափրությամբ «խեղիելու» տանտիրոց ստվորույթունը:

Գաբրիել արքեպ. Ալվազյանի թարգմանությունները տեղայնացման առանձնահատկություններից բացի աչքի են ընկնում բազմաթիվ արժանիքներով, ինչպես նաև ոիթին ու տաղաչափության հարազատ զուգորդությամբ: Նրա կատարած թարգմանություններում շարժումը նկարեն է, դառնում է շարժանկար: Այս թարգմանությունները տարբեր են նրանց առաջ և նետ կատարվածներից:

Գաբրիել Ալվազյանի թարգմանությունները ժամանակին ընդգրկվել են դասագրքերում ու ընտիր ժողովածուներում:

Լազարյան ճեմարանի հրատարակած «Ընտիր հաստուածք»-ում տեղ են գտել նաև Ալվազյանի թարգմանած 7 առանձները, որոնցից երկուսը («Եշ և սխակ» ու «Երաժիշտք») Կոխովի, մնացած հինգը Լաֆոնտենի, Փերոսի և Փինտորիի առանձների թարգմանություններն են՝ կատարված 1843—45 թվականների ընթացքում: Ավելի կոնկրետ Կոխովի առանձներից «Եշ և սխակ»-ը առաջին անգամ տպագրվել էր 1843 թ., իսկ «Երաժիշտք»-ը՝ 1844 թ., երկուսն էլ «Բազմավէպ»-ում, որտեղից և, մի քանի մասն վրիպակներով, ճեմարանցիներն արտադրել էին իրենց հիշյալ ժողովածուում: Հետագայում իրենց կազմած դասագրքերում դրանց տեղ են հատկացրել նաև Ղազարու Սղոյանն ու Հովհաննես

թումանյանը: Հայ թարգմանիչներից շատերը հետևել են Ալվազյանի թարգմանական սկզբունքներին: Այսօրվա թարգմանություններում իսկ շատ են ուղղակի փոխառությունները նրա թարգմանություններից:

Այն, որ Ալվազյանը թարգմանության համար ընտրեց Կոխովի առանձները, պատահական չեր: Անհատական գնահատականից ու նկատառումներից զատ թարգմանիչը հաշվի էր առնում դրանց համամարդկային արժանիքներն ու վայելած ընդունելությունը: Դրանք ի. Ա. Կոխովին դափնիներ քերին նրա կենանության հիկ օրոք, մի հետինակ, որն ականատես դարձալ իր առակագրքերի 18-րդ հրատարակությանը:

Վաղ ժամանակներից առանձներին քաշածանոյթ հայ ժողովորդը նույնական սիրով պիտի ընդուներ ուսում մեծ առակագիր Կոխովի ստեղծագործությունը: Նա գիտակցում էր, որ, բացի զուտ գեղարվեստական արժեքից, առակը «բանաստեղծության մեկ տեսակն է, որ մարդու միշտ սիրելի եղած է, վասնզի քիչ խոսքով շատ բան կհասկցնեն, առանց նեղացնելու կիրատեն, առանց սիրութելու կիանիիմանեն ու առանց ձանձրացնելու կամ հոգնեցնելու կզվարացնեն...»¹⁶:

Գաբրիել արքեպ. Ալվազյանի թարգմանությունները բարձր գնահատերով, անվանի գրականագետ Արմեն Տերտերյանը Կոխովի մահվան 100-ամյակի առթիվ հրատարակած իր գրքույթում թեև նշում է, որ նրա թարգմանություններում կամ նաև զրարյան ու խիստ բարբառային կերպ կրող մի շարք տողեր, որոնք անհասկանալի են դարձնում Կոխովի բյուրեղանման պարզ առանձները, սակայն դրանք, մեր կարծիքով, ժամանակի լեզվամուծողությունը դրսորդ արտահայտչածներ լինելով, չեն կարող նաև անհանձն նրա աշխատանքը: «...Այս բոլորը չի խանգարում ասել, —այնուհետև եզրակացնում է Տերտերյանը, —որ նրա թարգմանությունը ոչ միայն պատմական արժեք ունի, այլև պար էլ իր շատ էշերով մի չգերազանցված գործ է...»¹⁷:

Ավելորդ չենք համարում այս առիթով բերել թարգմանիչ բացասրությունը. «Այսու սկզբամբ շանացինք նաև մեր աշխատության մեջ ընդհանրապես չհեռանալ Տաճկառատանի հայոց մաքոր աշխարհաբարեն. բայց երբեմն՝ որ որ իմաստիս ցոլք

¹⁶ «Բազմավէպ», 1843, էջ 47:

¹⁷ Ա. Տերտերյան, Ռուս մեծ առակախոս բանաւորը, Երևան, 1944, էջ 81:

ու կենդանություն տալու բաղձանքեն ստիպվեցանք նաև որիշ աշխարհաբաներու, և և համարակ տաճկերենի խոսքեր, ոճեր, մասմիկներ փոխառությամբ ի գործ դնելու, լավ համարելով զոհել երբեմն մեր անկանոն աշխարհաբարին հստակությունը առակաց ճիշտ թարգմանության, բայց թե թարգմանության ճշտությունը հստակության»¹⁸:

Գարբիել արքեպ. Ալվազյանի աշակերտ ու կենսագիր Նիկողայոս Քարամյանցի վկայությամբ, Ալվազյան-թարգմանիչը, նույնիսկ գրեթե զրկված լինելով տեսողությունից, օգնական ունենալով իր աշակերտներին, մինչև իր կյանքի վերջին օրն իսկ «զրադակած էր Կոփլովի առակների սրբագրությամբ, որոնց լեզուն փոփոխություն և ավելի արևելան աշխարհաբարին մուտքանակությամբ, որոնց լեզուն փոփոխություն և ավելի արևելան աշխարհաբարին մուտքանակությամբ»¹⁹:

Դնչանա ասում են, բանաստեղծության թարգմանիչը բանաստեղծ պետք է լինի: Գարբիել արքեպ. Ալվազյանի թարգմանությունում կապատճառապ սրբագրություն և փոփոխությունում թեթևակի»²⁰:

¹⁸ «Առակը Քոփլովի», Կոտանդնուպոլիս, 1870, էջ 1:

¹⁹ «Առակը Քոփլովի», Վաղարշապատ, 1896, էջ 8:

թյունները մեզ ներկայացնում են ոչ միայն Կոփլովի գեղեցիկ առակները, այլև թարգմանչի գեղարվեստական բարձր ճաշակն ու հմտությունը: Որոշ առակների թարգմանություններում դրանք հասնում են կատարելության:

Գարբիել արքեպ. Ալվազյանն, ամենայն հավաականությամբ, անձամբ ծանոթ չի եղել Կոփլովի հետ: Կոփլովը մահացել է 1844 թ., երբ Ալվազյանը նոր էր սկսու տպագրել նրա առակների թարգմանությունները Վենետիկում: Բայց Կոփլովը նրա կրտսեր եղբոր՝ ծովանկարիչ Հովհաննես Ալվազովսկու արվեստի երկրպագուն էր, և մտերմական հարաբերություն կար պեզարդ առակագրի ու երիտասարդ, խոստումնալից հայ նկարչի միջն:

1896 թ., Գարբիել արքեպ. Ալվազյանի մահից 16 տարի անց, Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հրամանով, անփոփոխ վերաբատարակիլում է «Առակը Քոփլովի» 9 գրքերից (քաժիններից) կազմված ժողովածում՝ թարգմանչի ընդարձակ կենսագրությամբ:

Հայտ ամենայնի սա պերճախոս մի ապացուց է հայ իրականության մեջ Կոփլովի առակների ունեցած մեծ ընդունելության, լայն ժողովրդականության:

ՑԱՆԿ Ի. Ա. ԿՈՒԽՈՎԻ ԱՐԱԿԱՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (19-ՐԴ ԴԱՐ)

| Թարգմանչի ազգանունը | Թվականը | քանակը | Ի՞նչուն | | Որոշակի է հրատարակվել |
|----------------------------|-----------|--------|---------|------|----------------------------|
| | | | դրաբ. | աշխ. | |
| Հարություն գրդ. Ալամդարյան | 1814—1821 | | | | Մասկովա երկան |
| Խ. Արովյան | 1834—1840 | 10 | 2 | 10 | Ալմագլուա |
| Հ. Տեր-Զաքոբյան | 1841—1845 | 9 | 9 | — | Թիֆլոս |
| Հ. Համազառապյան | 1843 | 7 | 7 | — | Վենետիկի, Փարիզ, |
| Գարբիել գրդ. Ալվազյան | 1843—1870 | 197 | 5 | 197 | Վենետիկի, Փարիզ, Թեղոսոսիա |
| Հ. Գեորգ Հյուրմյուղ | 1844 | 1 | 1 | — | Վենետիկի |
| Հ. Քյոքչյան | 1849 | 27 | 27 | — | Մասկովա |
| Գ. Պատկանյան | 1850 | 3 | — | 3 | Թիֆլոս |
| Ե. Խոահակյան | 1850 | 2 | 2 | — | Թիֆլոս |
| Գ. Գողովյան | 1850 | 6 | — | 6 | Դորգաստ |
| <u>Մա. Բասամյանց</u> | | | | | |
| Մ. Մակրյանց | 1850 | 1 | 1 | — | Վենետիկի |
| Մ. Մանդինյան | 1852 | 2 | 2 | — | Մասկովա |
| Մ. Հարությունյան | 1858 | 1 | — | 1 | Թիֆլոս |
| Մ. Հարությունյան | 1859 | 1 | — | 1 | Վան |
| Մ. Վարշամյանց | 1860 | 2 | — | 2 | Թիֆլոս |
| Հ. Չուկայան | 1860 | 1 | — | 1 | Թիֆլոս |
| Գ. Տեր-Ալեքսանդրյանց | 1863—1865 | 4 | — | 4 | Թիֆլոս |
| Մ. Խուաթյանց | 1864 | 1 | — | 1 | Թիֆլոս |
| Ե. Գ. Մ. | 1864 | 2 | — | 2 | Արմաշ |
| Տ. Լեոնյան | 1865 | 8 | — | 8 | Կ. Պոլիս |
| Ե. Լալայանց | 1868—1869 | 2 | — | 2 | Թիֆլոս |
| Բ. Բուշներյան | 1878—1894 | 25 | 5 | 20 | Վենետիկի |
| Մ. Լիխանյան | 1885 | 1 | — | 1 | Թիֆլոս |
| Դ. Աղայան | 1885 | 4 | — | 4 | Թիֆլոս |
| Ա. Բահամբյանց | 1886 | 30 | — | 30 | Շուշի |
| Ա. Նալբանդյան | 1900—1904 | 8 | — | 8 | Թիֆլոս |